Արսեն Հակոբյան

«ԱԶԳԱՅԻՆԻ» ԵՎ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆԻ» ՄԻՁԵՎ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգամիջյան կոնֆլիկտները ու ազգային հիմնահարցերը հետխորհրդային իրողությունների անբաժան մասը դարձան: Ուշ խորհդային, գորբաչովյան հրապարակայնության ու վերակառացուման շրջանում «բացված» այս խնդիրները պայամանավորեցին նաև հետագա զարգացումները, և ԽՍՀՄ փլատակների վրա առաջ եկած նոր քաղաքական կազմավորումների, պետությունների ձևավորման ու ազգակառուցման հիմք հանդիսացան:

Խորհրդային ազգային ու մշակութային քաղաքականութունը հանրային, քաղաքական, գաղափարախոսական, գիտական դիսկուրսի մաս դարձավ՝ քննարկվելով տարբեր դիտանկյուններից, արժանանալով հակասական գնահատականների:

Թերևս գնահատականների հակասականությունը արդյունք էր «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» խորհրդային բանաձևի, որի երկակիությունն ու երկիմաստությունը թելադրում էր ոչ միանշանակ ընկալումներ ու քաղաքականություններ:

Արդեն իսկ լինելով պատմություն, այն նաև թերևս իր հակասական փոխակերպումներով շարունակություն ունի ներկայում ևս, ըստ այդմ էլ է դառնում անցյալի ու ներկայի հանգույց՝ թելադրելով հետազոտական իմաստավորման այժմեականությունը:

Պատմության դարձած խորհրդային անցյալը մեզ հնարավորություն է տալիս մոտ մեկդարյա զարգացումների հետահայաց վերլուծությամբ փնտրել այդ հարցադրման պատասխանը, որն իր երկակիության մեջ ամփոփում է խորհդային ազգային բանաձևը: Մեկդարյա պատմության ընթացքն ու անցյալն ունի հարուստ աղբյուրագիտական, վավերագրային հիմք, իսկ հետխորհրդային «ազգայինն» ու ազգային հիմնահարցերը մեր ակտուալ իրականությունն են:

ԽՍՀՄ ազգային քաղաքականության նրբություններն ու հակասականությունը հասկանալու համար անհրաժեշտ է քննարկել դրա ակունքները, բոլշևիկայն գաղափարախոսական, քաղաքական մոտեցումները դեռևս 20-դ սկզբից, գործնական քաղաքականության դրսևորումներն ու ձևակերպումները 1917-20-ական թթ., ինչպես նաև դրանց հետգա փոխակերպումները:

Գործնական քաղաքականության առումով, այն բարդ քաղաքական հակակշիռների ու փոխզիջումների մի համակարգ էր, որ սկիզբ առավ դեռևս 1917-1923թթ. քաղաքացիական պատերազմի ու դրա ավարտի շրջանում, ոչ միայն որպես գաղափարախոսաքաղաքական իմպերատիվ ու սկզբունք, այլ նաև կոնկրետ քաղաքական պրագմատիզմի ու շահերի համակարգ:

Բոլշևիկյան/կումունիստական մոտեցումների հիմքում ազգային հարցը շատ կարևոր տեղ ուներ և արդեն իսկ 20-րդ դ. սկզբին նրանք «ազգ» և «ազգային» երևույթները տեսականացրել ու ձևակերպել էին՝ աչքի առաջ ունենալով Ռուսական կայսրության բազմազգ բնույթը և ապագա վերակազմավորման հեռանակարը:

1920ական թթ, խորհրդային իշխանության ներսում «ազգայինի» նկատմամբ քաղաքական ու գաղափարական երկու ուղղություն ձևավորվեց, որը պայմանական կարելի է անվանել «ինտերնացիոնալ, կոսմոպոլիտական» (Բուխարին, Պյատկով), որը ժխտում էր ազգայինը, ազգային ինքնորոշումը, դրա կարևորությունը խորհրդային ու կոմունիստական, սոցիալիստական իրականություն պայմաններում, մյուսը՝ «ազգայանական» (Լենին, Ստալին): «Ազգայանական» ուղղությունն ընդունում ու խրախոսում էր ազգային ինքնութուններն ու հատկապես փոքրամասնությունները իրավունքները, ու 1920թթ- մինչև 1930թթ. խորհրդային ազգային քաղաքականությունը հիմնված էր փոքրամասնությունների ինքնության խրախուսման, դրանց մշակութային արդիականցման կոնցեպտների վրա ի հակադրություն «կայսերականության»:

Ուշագրավ է, որ ազգային –մշակութային քաղաքականության կուսակցական կենտրոնական մարմինների փաստաթղթերում ու դիրեկտիվներում հայերի ու հայկականության նկատմամբ մոտեցումները: Հայերը համարվում էին «արևմտյան ազգ կամ ժողովուրդ» («արևմտյան-զարգացած» մոդելով), որը կարիք չունի դիրեկտիվային ազգային-մշակութային արդիականցման ու զարգացման, քանի որ այն արդեն իսկ դրա կրողն է: «Արևմտյան ազգ կամ ժողովուրդ» էին համարվում նաև ռուսները, գերմանացիները, վրացիները, ուկրանիացիները և հրեաները:

Ուշագրավ է, որ ինչպես վկայում են փաստաթղթերը, 1920-ական թթ. խորհդային ազգային-մշակութային քաղաքականության, ազգակառուցման, մշակութային արդիականացման մոդելների ընտրության հիմքում մոսկովյան իշխանություններն ընտրել էին 1918-20թթ. Հայաստանի ու Վրաստանի Հանրապետության մոդելները՝ որպես «հաջողված օրինակներ»:

«Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» բանաձևը գործնական իրականացման ընթացքում «ազգայինի» խրախուսման կամ ձևակերպման հիմքում դրեց ինքնության սիմվոլիկ բաղադարիչները՝ նպատակ ունենալով ձևավորել ազգային ինքնության խորդանիշային համակարգեր:

«Ազգայինի» խրախուսումը միևնույն ժամանակ սկսեց հակակշռվել բռնաճնշումներով առաջին հերթին այն ժողովուրդների նկատմամբ, որոնք անդրսահմանային էին, ապրում էին և՝ ԽՍՀՄ-ում, և ԽՍՀՄ- ից դուրս՝ կանխարգելելու խորհրդայինին ոչ հարիրի արժեքների ու գաղափարների մուտքը ԽՍՀՄ:

Արդեն 1932-36թթ. ԽՍՀՄը անցում կատարեց «տիտղոսային ժողովուրդների» ձևավավորման ու խրախուսման քաղաքականությանը՝ իր համար որպես հենարան ունենալու մեծ էթնոհավաքականությունները՝ իրենց համապատասխան էլիտաներով, որի համատեքստում փոքրամասնությունները սկսեցին ստորադասվել «տիտղոսայիններին»:

Տեղի ունեցավ, և՝ կենտրոնական և՝ տեղական-հանրապետությունների կուսակացական- խորհդային վերնախավերի ազգայնացում և «տիտղոսայնացում»: 1960-ական թթ. սկսած ԽՍՀՄ կենտրոնական վերնախավը արդեն իսկ կորցրել էր իր դեռևս 20-րդ դ, սկզբի հեղափոխական ու տրանսնացիոնալ կումունիստական շարժումից ծնված ոչ կայսերական խմբերի ներկայացուցիչներին, դրանով իսկ նաև իր վերազգային բնույթը:

«Ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական» մոդելը կառավարման խորհդային ազգային -տարածքային համակարգի հետ զուգակցված, հասարակական արդիականացման գործընթացի համատեքստում ըստ էության ոչ միայն ձևով այլև բովանադկությամբ ձևավորորեց ազգայինը, ուր ինքնության խորհրդանշային համակարգը ուրվագծեց նոր իրականություն՝ համախմբող ազգայնական լիցքով ու իրական սահմաններով: